



ԷՋԵՐ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

ԵՐԿՈՒ ԽՈՍԷ



Նոր-Ջուղայի ժողովրդական բանահյուսության թագն ու պսակն է «ՅԱԼԱԼԻ»-ն *), որ իր պարզ, բայց պատկերավոր բովանդակությամբ, իր գունեղ ու ներդաշնակ երաժշտությամբ կարևոր տեղ է գրավում հայ ժողովրդական երգերի մեջ: Դա ջողաճալության հարսանեկան միակ պարերգն է, որի մեջ ցայտուն գուններով ցույց է տրվում են ժողովրդի մաքուր, անբիծ սիրային ապրումները, նրա հոգեկան ուրախ զեղումներն ու զգացումները, միաժամանակ երևան է գալիս նրա ստեղծագործական վրձինը:

Այստեղ Նոր-Ջուղայի ժողովուրդը բայց է անում իր սիրտն ու հոգին և վրձինով պեսպես երանգներով նկարում նարահարսի «աննման պատկերը», երգում նրա «մանուշակ զոլֆերը», «թաղ տուած հունքերը», «ջեյրանի աչքերը», «մարգարիտ առամները», «սիրուն սուրայի գլարդանը», «սալբի հասակը» և միաժամանակ այնքան անկեղծությամբ գեղգեղում իր սրտի հուզվերը:

Պարզ ու անկեղծ զգացմունքով տուրված այդ պոեզիան, իր գողտչիկ երաժշտությամբ, առածին փայլ է տալիս Նոր-Ջուղայի հարսանիքներին, որտեղ ջահել ազդիկները, հարսները, կանաչք ու երիտասարդները մեծ շրջան բռնած, դափ ու զուռնայի նվաղածության տակ երգում ու պարում են փեսային «կարմիր-կանաչ» կապելու և հարսին զարդարելու ժամանակ: «Կարմիր-կանաչ» մի զույգ, ոսկեթել նախշած, լայն ժապավեններ են, որ փեսայի կրծքին կապում են խա-

շածե, կարմիրը փեսայինց, խակ կանաչը հարսինց տանը:

Երգին հատուկ երանգ է տալիս նաև պարը, որ դափ ու զուռնայի նվագածության գունագեղ ու թմբի և ելեկշների տակ սկսվում է հանդարտ, ներդաշնակ համաչափությամբ, ապա հետզհետե արագանում ու ստանում է զվարթ, աշխույժ բնույթ, ստեղծելով արևելյան մի գեղեցիկ տեսարան:

Առհասարակ ժողովրդական այդ երգի պարզ կառուցվածքը, նրա սիրուն, ներդաշնակ պարը, գունեղ երաժշտությունը և նվագարանների երանգավոր հնչյունները միմյանց ներդաշնակելով կազմում են գեղարվեստական մի աշխարհ և իրենց պատկերավոր ու նուրբ ելեկշներով ազդում հարսնեկոթների հոգու, սրտի, զգայումների վրա՝ առաջ բերելով հաճելի մի տպավորություն:

Երգի էական հատկանիշներից մեկն էլ ազգագրական արժեքն է: Այստեղ դուք տեսնում եք հին, նահապետական կենցաղի ու սովորության ուրույն էջերը, որոնց ցայտուն արտահայտություններն են նորահարսի նախշուն հինալած ձեռներն ու ոտները, մատների ոսկե մատանիները, ձեռքերի ոսկե ապարանջանները, ոտների ոսկե խալխալները, հագի մալմալ շապիկը և այլն:

Պարերգի հատուկ գեղեցկություններից մեկն էլ Նոր-Ջուղայի ժողովրդական բառառան է. — փայլման (փայլում), դոյման (գալիս), արազ (երազ), խազիզ (հագիզ), ամ (եմ), խրմար (համար) և այլն, որ առանձին տեղ է գրավում հայ բառառարկատության պատմության մեջ:

Թե ե՞րբ է հորինվել այս գողտրիկ պարերգը և ո՞ւմ ձայնազրույթություն է, հայտնի չէ: Պարը է միայն ա՛յն, որ երգի թե՛ պատկերավոր բովանդակությունը, թե՛ դրավիչ երաժշտու-

*) Երչապար, կտր պար:

թյունը և թե՛ սիրուն պարը բխում են ժողովրդական ստեղծագործության ակնաղբյուրից և ունեն գեղարվեստական արժեք:

Զպետք է մոռանալ, որ հայ հասարակական կյանքը հետզհետե դրվում է նոր հիմքերի վրա և ժողովրդական կենցաղը գտնվում է կերպարանափոխման շրջանում: Զպետք է մոռանալ և այն, որ անողոր ժա-

մանակը կատարում է իր ավերիչ դերը: Կանցնի մի տասնամյակ ևս և շատ թանկագին նյութեր անհետ կկորչեն: Պետք է փրկել դրանք, քանի դեռ ուշ չէ:

Հենց այդ գիտակցությամբ էլ այսօր Նոր-Զուղայի ժողովրդական բանահյուսության գեղեցիկ «ՅԱԼԱԼԻ»-ն, նրա գրավիչ երաժշտությունն ու սիրուն նվագարանները, իրենց հարազատությամբ, հանձնում ենք հայ ազգադրական-երաժշտական գրականությանը:

ՅԱԼԱԼԻ

Մեներգ

Moderato.

Ե՛ Լա Լի՛, հա՛յ ջա՛ն Ե՛ի - մա՛ - ն, ջա՛ն Ե՛ի - մա՛ - ն,
 Ե՛ Լա Լի՛, ջա՛խտ ա՛րա - րի՛ - ը ջա՛ն Ե՛ի - մա՛ - ն,
 Ե՛ Լա Լի՛, պա՛տ կ՛ե ըր՛ - ք ա՛ - ան Ե՛ր - մա՛ - ն,
 Ե՛ Լա Լի՛, դե՛մ ջը՛ք պա՛ - յ ծա՛ - ու փա՛յ Լը՛ - մա՛ - ն:

Խմբերգ

Ե՛ Լա Լի՛, հա՛յ ջա՛ն Ե՛ի - մա՛ - ն, ջա՛ն Ե՛ի - մա՛ - ն,
 Ե՛ Լա Լի՛, ջա՛խտ՝ արա՛րին՝ ջա՛ն Ե՛ի - մա՛ - ն,
 Ե՛ Լա Լի՛, պա՛տկե՛րդ ա՛ննմա՛ն,
 Ե՛ Լա Լի՛, դե՛մքդ պա՛յծա՛ռ փա՛յլմա՛ն:

Յա՛լալի, հա՛յ ջա՛ն ի մա՛ն¹, ջա՛ն ի մա՛ն,
 Յա՛լալի, ջա՛խտ՝ արա՛րին՝ ջա՛ն ի մա՛ն
 Յա՛լալի, պա՛տկե՛րդ ա՛ննմա՛ն,
 Յա՛լալի, դե՛մքդ պա՛յծա՛ռ փա՛յլմա՛ն:⁴
 Յա՛լալի, գլխի՛դ գաթա՛ղու՛⁵ թե՛լն,
 Յա՛լալի, դու աս իմ սրտի մե՛լն⁶.
 Յա՛լալի, գոլֆե՛րդ՝ ա մա՛նու՛շակ,
 Յա՛լալի, դոր՝⁸ անմա՛հական թո՛շակ⁹:
 Յա՛լալի, մանդի՛լդ¹⁰ ա նափրմա՛ն,¹¹
 Յա՛լալի, թշե՛րդ պա՛յծա՛ռ փա՛յլմա՛ն.
 Յա՛լալի, գոլփե՛րդ ա՛ննմա՛ն,
 Յա՛լալի, ախտով՛դ պա՛տատ¹² դոլմա՛ն¹³:

1 Իմ հողին, իմ կյանքը: 2 Հենց, հիմա, հագիվ:
 3 Արին: 4 Փայլում: 5 Փեսայի թաղ: 6 Ցանկություն,
 գեղեցկություն: 7 Խոսք, գանդուր: 8 Ինչպես:
 9 Բաժին: 10 Գլխի մեծ, երգար թաշկինակ: 11 Անփուլ կերպով փռված: 12 Պտույտ: 13 Գալխո:

Յա՛լալի, հունքերդ ա թաղ¹⁴ տուած,
 Յա՛լալի, սրտիս մեջն դաղ¹⁵ տուած,
 Յա՛լալի, աչքեր տանիս շելրանի,
 Յա՛լալի, տեսնողի խելքն տանի:

Յա՛լալի, երբոր իշարաթ¹⁶ կանես,
 Յա՛լալի, սրտիս մեջը կը դաղես.
 Յա՛լալի, հուշս գլխես կտանես,
 Յա՛լալի, սաղ-սաղ¹⁷ ինձ կսպանես:

Յա՛լալի, պոնչկներդ դոմզի¹⁸,
 Յա՛լալի, ալամ¹⁹ դարձել ինգլիզի²⁰.
 Յա՛լալի, արարաթով²¹ գրուց տաս,
 Յա՛լալի, սիրով սրտիս նստած աս:

Յա՛լալի, կեռքնիդ²² մարգարիտ ա,
 Յա՛լալի, տաննչորս տարիդ թամամ²³ ա.
 Յա՛լալի, ում լայեղ²⁴ ա, նա տանի,
 Յա՛լալի, ինչ կուզենա, նա կանի:

Յա՛լալի, մատնումդ լի մատանի,
 Յա՛լալի, ինձ լայեղ ա, ո՛վ կը տանի.
 Յա՛լալի, ձեռնիդ ոսկե արքան²⁵,
 Յա՛լալի, քո անումն ա Մարիամ ջան:

Յա՛լալի, աշրաֆիքդ²⁶ ալմազ ա,
 Յա՛լալի, ինչ շարթ²⁷ կը տաս, արազ²⁸ ա.
 Յա՛լալի, ձեռներդ նախշուն խինած,
 Յա՛լալի, խելքս ա խելագարած:

Յա՛լալի, ոտնումդ ոսկե խալխալ²⁹,
 Յա՛լալի, խազիդ շապիկն ա մալմալ³⁰.
 Յա՛լալի, ոտներդ կարմիր խինած,
 Յա՛լալի, տեսնողներն մոլորած:

Յա՛լալի, սիրուն սուրայի³¹ գյարդան,
 Յա՛լալի, շուռ³² աս եկել Հնդստան³³.
 Յա՛լալի, քեզ սիրում ամ սրտովս,
 Յա՛լալի, որ միշտ վերցնես բարովս:

Յա՛լալի, բոյդ³⁴ նման սալբի ծառ,
 Յա՛լալի, ուզում ամ քեզ անդադար.
 Յա՛լալի, մեջքումդ ա շարքազի³⁵,
 Յա՛լալի, քեզ տեսնողին երա՛նի:

Յա՛լալի, կարմիր մալարում³⁷ քուն աս,
 Յա՛լալի, մտքով ինձ խեռ³⁸ զարթուն աս.
 Յա՛լալի, թշնամուդ գրողն տանի,
 Յա՛լալի, յուտով ասենք. «մեռանի»:

14 Կամար: 15 Խոց, ալովածք: 16 Նշան, ակնարկ:
 17 Ողջ-ողջ: 18 Կարմիր: 19 Ողջ: 20 Անգլիացի:
 21 Ոճ, խոսքի դարձվածք: 22 Ատամներ: 23 Լրիվ,
 ամբողջ: 24 Արժանի: 25 Ապարհեջան, 26 Ոսկեզրամ:
 27 Պալման, դաշն, գրազ: 28 Երազ: 29 Օղակ, բնական
 նիւ մարմնի վրա: 30 Նուրբ շղարչ կտոր: 31 Երկարա-
 վիզ: 32 Վիզ, պարանոց: 33 Ման շար: 34 Հնդկաս-
 տան: 35 Հասակ: 36 Ոսկեթել երիզով գոտի:
 37 Քարայր: 38 Հեռ:

Յա՛լալի, իւելոք անձանց միջումն աս,
 Յա՛լալի, գովելի մեջլսումն³⁹ աս.
 Յա՛լալի, մեզ ո՛ւտ⁴⁰ էր էրպես բախտն,
 Յա՛լալի, որ նստինք էսպես թախտն:
 Յա՛լալի, նասիր⁴¹ լինի քամբախտին,
 Յա՛լալի, կելնի մինչև մլուս տարին.
 Յա՛լալի, քշերնեք⁴² ես անքուն ամ,
 Յա՛լալի, ես քո սիրուց զանբուն ամ⁴³:
 Յա՛լալի սպանեց էդ նոր խալն,
 Յա՛լալի, ե կ, տես իմ սրտի հալն⁴⁴.
 Յա՛լալի, ման աս գուման⁴⁵ կտերն⁴⁶,
 Յա՛լալի, որ ցույց տաս քո պատկերն:
 Յա՛լալի, էս ի՞նչ քաներ ամ լսում,
 Յա՛լալի, որ քեզ վերա ան ասում.
 Յա՛լալի, Կալկաթա ինչ խբար⁴⁷ ա,
 Յա՛լալի, ինձ խմար⁴⁸ մին ճար⁴⁹ արա:
 Յա՛լալի, էս շեմ ուզում, էն կ'ուզեմ,
 Յա՛լալի, տերտերի աղջիկ կ'ուզեմ.
 Յա՛լալի, էս տարիքն շատ փոքր ա,
 Յա՛լալի, քո խոսքերն յատ քողցր⁵⁰ ա:
 Յա՛լալի, ասածներդ շարեշար,
 Յա՛լալի, ուզում ամ քեզ անդադար.
 Յա՛լալի, մեծ հուսով ես կսպասեմ,
 Յա՛լալի, որ քեզի ես գդանեմ⁵¹:

³⁹ Ժողով, համախմբում: ⁴⁰ Որտեղից: ⁴¹ Բաժին,
 վիճակ, մաս: ⁴² Գիշերներ: ⁴³ Մաշվում եմ: ⁴⁴ Վիճակ,
 դրուժյուն: ⁴⁵ Գալիս: ⁴⁶ Տանիրում: ⁴⁷ Լուր: ⁴⁸ Հս-
 մար: ⁴⁹ Դեղ: ⁵⁰ Քողցր: ⁵¹ Կանել:



Նոր-Ջուլայի երաժշտական գործիքներ